

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԾՐԱԳԻՐ

Հավելված  
ՀՀ կառավարության 2008թվականի  
ապրիլի 28-ի N 380-Ս որոշման

4.4.3. Կրթությունը և գիտությունը

Կառավարությունը միջոցներ է ձեռնարկելու միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան կրթության որակ ապահովող կրթական համակարգի ստեղծման, կրթության մատչելիության ապահովման, գիտության զարգացման ուղղությամբ: Պետության, հասարակության և անհատի անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության կարևոր երաշխիք է կրթության և գիտության ոլորտներում իրականացվող բարեփոխումների արդյունավետության էական բարձրացումը: Այն պետք է ուղղված լինի տարածաշրջանում Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի, հեղինակության վերականգնմանը: Կյանքի բոլոր փուլերում որակյալ և ցկյանս կրթություն ստանալու հնարավորությունների ապահովումը լինելու է ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնական առանցքը:

Այդ առումով՝

**առաջին՝** կառավարության գործունեության կարևոր ցուցանիշներից մեկը կհանդիսանա կրթության մեջ քաղաքացիների ընդգրկվածության աստիճանի բարձրացումը: 2012 թվականին ակնկալվում է կյանքի 6-21 տարեկան ժամանակահատվածում ուսումնառության սպասվելիք տարիների թիվը հասցնել 12.5 տարվա,

**երկրորդ՝** կառավարությունը կրթական ծառայությունների որակի բարձրացման առումով կարևորելու է հանրակրթական դպրոցների ուսումնամեթոդական հենքի արդիականացումն ու դպրոցների շենքային պայմանների և ուսումնական գործընթացի ապահովման տեխնիկական միջոցների բարելավումը: Մասնավորապես, կառավարությունը մտադիր է մինչև 2012 թվականը վերանորոգել բոլոր հանրակրթական դպրոցները (ներառյալ՝ դրանց պատշաճ ջեռուցման հնարավորությունների ապահովումը)՝ միջնաժամկետ հատվածում կապիտալ ծախսերին ուղղելով ոլորտի ընդհանուր պետական ծախսերի 8-10 տոկոսը: Կառավարությունը հետամուտ կլինի, որ մինչև 2012 թվականը Հայաստանի բոլոր դպրոցներն ապահովված լինեն բավարար քանակությամբ համակարգչային սարքավորումներով, և դրանց գերակշիռ մասն ընդգրկված լինի դպրոցական միասնական համացանցում,

**երրորդ՝** կառավարությունն ապահովելու է համակարգչային հմտություններ և օտար լեզուներ ուսանելը՝ սկսած կրտսեր դպրոցից,

**չորրորդ՝** կրթական համակարգի արդյունավետության մեծացման, Հայաստանում և զարգացած երկրներում կրթության որակի միջև առկա անհամապատասխանության վերացման տեսակետից կառավարությունը կարևորում է կրթության արդյունքների գնահատման արդիական համակարգի և որակի ապահովման ազգային կենտրոնի ձևավորումը, համապատասխան օրենսդրական փաթեթի մշակումը: Գործողություններ կիրականացվեն նաև եվրոպական երկրներում Հայաստանի բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթերի ճանաչման ուղղությամբ,

**հինգերորդ՝** կրթության նկատմամբ որակապես նոր պահանջների ձևավորումը թելադրում է զգալիորեն բարձրացնել մանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման, մասնագիտական առաջխաղացման և ատեստավորման մեխանիզմների արդյունավետությունը,

**վեցերորդ՝** արդիական հմտություններ ունեցող որակյալ կադրերի պահանջարկը բավարարելու նպատակով կառավարությունը կաջակցի կրթական համակարգի և տնտեսության իրական հատվածի միջև կապի ապահովմանը: Կներդրվի մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի գնահատման եվրոպական լավագույն փորձը,

**յոթերորդ՝** կարևորելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության հարցերը, բնականոն զարգացման ու սոցիալական ինտեգրացիայի խնդիրները՝ կառավարությունն անհրաժեշտ պայմաններ կստեղծի նաև այդ

երեխաների կրթության համար: Կապահովվեն պայմաններ ազգային փոքրամասնությունների կրթության ծրագրերի իրականացման համար,

**ութերորդ**՝ նախադպրոցական կրթության զարգացումն ուղղվելու է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Կառավարությունը կաջակցի համայնքներին ընդլայնելու նախադպրոցական կրթական ծառայությունները և մեծացնելու դրանցում հատկապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածությունը,

**իններորդ**՝ մասնագիտական և շարունակական կրթության ոլորտում կառավարությունը շարունակելու է եվրոպական կրթական տարածքին ինտեգրման քաղաքականությունը՝ Լիսաբոնի հռչակագրի սկզբունքներին համապատասխան՝ արմատական բարեփոխումներ իրականացնելով ինչպես համալսարանական, այնպես էլ միջին մասնագիտական կրթության ոլորտում: Մինչև 2010 թվականը կներդրվի Բոլոնիայի գործընթացով նախատեսված, միջազգային չափանիշներին համադրելի որակավորումների ազգային համակարգ, կիրականացվեն արմատական քայլեր համալսարանական կառավարման արդիականացման, այդ թվում՝ գիտական կադրերի որակավորման և ասպիրանտական ուսուցման կատարելագործման ուղղությամբ,

**տասներորդ**՝ կառավարությունը միջոցառումներ է իրականացնելու մասնագիտական կրթական համակարգում ծառայությունների մատչելիության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես, ուսանողական նպաստների և վարկավորման մեխանիզմների ներդրման հաշվին,

**տասնմեկերորդ**՝ կրթության ոլորտի բարեփոխումներին համարժեք և համաչափ՝ կառավարությունը կապահովի պետական ծախսերի շարունակական ավելացումը: 2012 թվականին կապահովվի համախառն ներքին արդյունքի նկատմամբ առնվազն 3.5 տոկոս ցուցանիշ,

**տասներկուերորդ**՝ կառավարությունը, գիտելիքի վրա հիմնված տնտեսությունը համարելով Հայաստանի կայուն զարգացման գրավական, մեծապես խթանելու է գիտության ոլորտի բարեփոխումները՝ զարգացնելով գիտության հարցերով զբաղվող առանձին լիազոր մարմնի գործունեությունը: Նպատակ ունենալով արագացնել համակարգի ենթակառուցվածքների արդիականացումը՝ կբարձրացվի ոլորտի կառավարման և գիտական աշխատանքների արդյունավետությունը, կապահովվեն ձևավորված պետական աջակցության միտումները:

Այդ առումով՝

- ելնելով Հայաստանի գիտության զարգացման առաջնահերթ խնդիրների լուծման անհրաժեշտությունից՝ կմշակվեն Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման հայեցակարգից բխող ռազմավարական մոտեցումները,
- գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման նպատակով միջազգային արդի չափանիշներին համահունչ գիտական հասարակայնության անմիջական մասնակցությամբ կվերահաստատվեն Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները,
- կառավարությունն առանձնահատուկ ուշադրություն կդարձնի հասարակական գիտությունների զարգացմանը՝ որպես հասարակական զարգացումների գիտական պլանավորման և իրականացման անհետաձգելի հրամայական,
- բարեփոխումների արդյունավետությունն ապահովելու համար հստակեցվելու են գիտության զարգացման գործում Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի տեղն ու դերը, գիտահետազոտական ինստիտուտների մրցունակության ապահովման, համալսարանական գիտության հետ այդ ինստիտուտների համադրման մեխանիզմները,

**տասներեքերորդ**՝ կառավարությունը հետամուտ է լինելու բարձրագույն ուսումնական հաստատությունները գիտական լուրջ կենտրոններ դարձնելուն՝ խթանելով հետազոտական աշխատանքների ուժեղացումը: Գիտության զարգացման առումով կարևորվում է գիտնականների համար գիտությամբ զբաղվելու գրավչության ապահովումը և գիտական գործունեության

արդյունքներն իրացնելու հնարավորությունը տեղական և համաշխարհային շուկաներում: Կներդրվեն գիտական ծրագրերի և կատարված աշխատանքների արդյունքների գնահատման ժամանակակից մեթոդներ ինչպես գիտական աստիճանների շնորհման, այնպես էլ բյուջետային հատկացումների ծրագրավորման համար,

**տասնչորսերորդ**՝ կմշակվեն և կիրառործվեն միջազգային կենտրոնների հետ համագործակցությանը և ինտեգրացմանը, հայագիտության արդի և հեռանկարային հիմնահարցերի լուծմանն ուղղված գիտական ծրագրեր, կտարվեն աշխատանքներ գիտական դպրոցների ձևավորման ուղղությամբ,

**տասնհինգերորդ**՝ զարգացած երկրների հետ համադրելի կրթական համակարգ ունենալու տեսանկյունից միջոցներ կձեռնարկվեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և միջոցների կիրառման ոլորտների ընդլայնման, այդ ծառայությունների որակի բարելավման և մատչելիության ապահովման առումով, կկարևորվի ինտերակտիվ էլեկտրոնային կրթության զարգացումը և համատարած կիրառումը, կներդրվեն ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման և հեռավար ուսուցման համակարգեր: